ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

23.05.2024թ. Գագարին բնակավայր

2024թ. մայիսի 23-ին ժամը 12.00-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, 2023թ. մայիսի 3-ի Հայաստանի հանրապետության մասին Օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ Օրենքի, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատերելու մասին N 28,12.2023թ. 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ»ՍՊԸ-ի կողմից, Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Գագարին բնակավայրի վարչական տարածքում Գործարանային փ. թիվ 7 և 16 հողամասեր հասցեում, արևային ֆոտովոլտային կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ երկրորդ հանրային քննարկումը:

Հանրային քննարկմանը ներկա էին Գեղարքունիքի մարզպետարանի, Սևան համայնքի, «Փաուեր Էներջի» ներկայացուցիչները, բնակավայրի վարչական ղեկավարը, բնակչներ, «ՇՄԱՓԿ»ՊՈԱԿ-ի մասնագետը:

Ելույթ ունեցան.

Հանրային քննարկումը բացեց **Սևանի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (Գագարին բնակավայրում) Համլետ Առաքելյանը** ներկայացնելով հանրային քննարկման նպատակը, գործունեության տեսակը, կառուցման վայրը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ Նելլի Նասիբյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության՝ արևակայանի, ենթակայանի և 110կՎ լարման օդային գծի կառուցման գնահատման հայտի փորձաքննական գործընթացը, հանրային քննարկումների ընթացակարգը, նշեց որ այն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Փորձաքննության ներկայացված գնահատման հայտն ուղարկվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և համապատասխան գերատեսչություններին՝ կարծիք ստանալու նպատակով: Ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա հայտը լրամշակվել է, որից հետո ծանուցվել է համայքնին և բնակավայրին՝ օրենքով սահմանված կարգով: Կարևորեց հանրային մասնակիցների առաջարկությունները, դիտողությունները, որոնք հաշվի կառնվեն փորձաքննական գործընթացում: Նշեց, որ հայտում ներկայացված է գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, դրանց ուղղված միջոցառումները:

Արևակայանի կառուցման գնահատման հածվետվության մշակող՝ «Նովալ» ՍՊԸ ընկերության ներկայացուցիչ Թ. Նուրիջանյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության համառոտ նկարագիրը, նախատեսվող արևակայանը կառուցվելու է երկու առանձին հողակտորների վրա, ընդհանուր զբաղեցնելու է 11,07 հա մակերես, որից վահանակների տարածքը՝ 5,2 հա: Կառուցվելու է ենթակայաններ, 2 տրանսֆորմատորով: Արևակայանի և ենթակայանի միացումները կատարվելու են մալուխագծով և 40մ օդային գծով: Տարածքը նախկինում եղել է արտադրական՝ նավթամթերքի բազա, այժմ հողի նպատակային նշանակությունը փոխվել է էներգետիկայի հողատեսքի: Ներկայացրեց գործունեության իրականցման հետևանքով շրջակա

միջավայրի բաղադրիչների՝ օդային ավազան, ջրային և հողային ռեսուրսների, կենսաբազմազանության, մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները՝ շինարարության և շահագործման փուլերում, ինչպես նաև վերջիններիս վրա հնարավոր ազդեցությունների կանխմանն ու մեղմացմանն ուղղված բնապահպանական միջոցառումները, մոնիթորինգը: Գործունեության իրականացման ընթացքում կազմակերպվելու է շինհրապարակ, անհրաժեշտ կահավորանքով՝ մեքենաների անիվների լվացման հարթակ, բիոզուգարան, արտակարգ իրավիճակները կանխարգելող համակարգեր և այլն: Կարևորեց շահագործման փուլում արևակայանի շարքից դուրս եկած վահանակների տեղակայման լուծումները, որիդ նպատակով նախաձեռնողը նախատեսում է փակ պահեստային տարածք:

Ն. Նասիբյանը հարց բարձրացրեց գործունեության տարածքի՝ շինություններից, բնակավայրից հեռավորության, մալուխագծի կառուցման ընթացքում ճանապարհի և երկաթգծի հետ հնարավոր հատման, օդային գծի հզորության, արոտավայրերին խանգարելու վերաբերյալ:

«Փաուեր Էներջի» ներկայացուցիչ՝ Ազատ Սարգսյանը պատասխանեց, որ ճանապարհի հետ հատվելու է, այդ դեպքում ձեռք կբերվեն պատասխանատու գերատեսչությունների համապատասխան թույլտվությունները:

Սևանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի մասնագետ Հայկ Ղուկասյանը պատասխանեց, որ ճանապարհը համայնքային նշանակության է, այժմ չի գործում: Իսկ հատվելու դեպքում համայնքապետարանը խնդիր չի տեսնում և Ձեռնարկողի հետ կքննարկեն և կգտնեն լուծումները:

Թ. Նուրիջանյանը նշեց, որ երկաթգծի հետ նախագծային լուծումներում հատում չի նախատեսվում, օդային գիծը 110կվ հզորության է՝ 40մ երկարությամբ, իսկ արոտավայրերին չի խանգարելու, քանի որ գործունեությունն իրականացվելու է նախկին արտադրական տարածքում:

Հ. Ղուկասյանը նշեց, որ գործունեության տարածքը նախկինում եղել է նավթաբազայի տարածք, և ի սկզբանե օգտագործվել է արտադրական նպատակներով: Հարևանությամբ եղել են այլ գործարաններ: Բացվելու են նոր աշխատատեղեր, առաջնությունը կտրվի Գագարինի բնակիչներին: Ձեռնարկողն արդեն կատարել է ֆինանսական ներդրումներ, որը կուղղվի համայնքի և բակավայրի սոցիալական խնդիրների լուծմանը:

Ն. Նասիբյանը եզրափակեց հանրային լսումը, շնորհակալություն հայտնեց ներկաներին հանրային քննարկմանը մասնակցելու համար:

Վարող՝ Սևանի համայնքապետարանի

աշխատակազմի առաջին կարգի մասնագետ

Հ. Առաքելյան _____

«Փաուեր Էներջի» ներկայացուցիչ՝

Ա. Սարգսյանը _____